ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գասպարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Պողոսյան, Ա. Երմազյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

Փաստաթղթերը գնահատելու մասին
(Ա. Գասպարյան)

1. Փաստաթղթերի գնահատման՝

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321/1 սենյակ.
-օրը՝ 13.12.2018թ., -ժամը՝ 16:30

03.12.2018թ. հարցում է ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, որի տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 7000 /յոթ հազար/ ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը:
«ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում գրությամբ ներկայացրել է հետևյալ փաստաթղթերը՝ քաղվածք հարկ վճարողի անձնական հաշվի քարտի /հարկային պարտավորության չափը 0/ և 29.11.2018 թ. վճարման անդորագիր:
Ընդունել ի գիտություն, որ գրության մեջ սխալ է նշված մասնակցի կողմից հայտը ներկայացնելու ժամկետը, իսկ պարտքը «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի կողմից մարվել է 29.11.2018 թ. /հայտը ներկայացնելու հաջորդ օրը/:
Վերոգրյալով պայմանավորված, «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում բավարար հիմքեր չգտնելով, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 45-րդ կետով, որոշեց տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով ուղարկել ՀՀ Ֆինանսների նախարարություն նշված ընկերության նկատմամբ համապատասխան գործընթաց նախաձեռնելու համար:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Գասպարյան

Անդամներ՝ ---------- Տ. Պողոսյան

---------- Ա. Երմազյան

Քարտուղար՝ ---------- Ի. Եղիազարյան